

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԸ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ

I

Վան վիլայէթը.—տեղը. սահմանները. տարածութիւնը: Վանի և միւս նահանգներին վիճակացոյց քաղաակը. գիւրքը. մակերևոյթի կազմութիւնը. նշանաւոր լեռները, լեռնադաշտերը, դաշտավայրերը և ձորերը. ջրերը. նշանաւոր գետերը, լճակները. հողը. կլիման. ջերմութեան և ցրտութեան շափը նահանգի զանազան մասերում:

Պետական ամենավերջին կարգադրութեան համաձայն օսմանեան երկրները վարչականապէս բաժանուում են 32 վիլայէթներին, այսինքն նահանգների կամ կուսակալութիւններին:

Միայն Ասիական Թիւրքիան այժմ ունի 20 նահանգներ, որոնցից մէկն է Վանի վիլայէթը: Վանը 1877 թւից սկսած եղել է առանձին կուսակալութիւն, իսկ դրանից առաջ Կարինի կուսակալութեան մի մասն էր կազմում: Յիշեալ թւին երբ Վանը նահանգ եղաւ, Բաղէշը Վանի հետ միացած էր, իսկ այժմ Բաղէշն էլ առանձին նահանգ է նորագոյն կարգադրութեան համաձայն, որով այժմ Կարին, Վան և Բաղէշ կամ Բիթլիզ առանձին-առանձին կուսակալութիւններ են:

Վանի նահանգը տարածուում է Ասիական Թիւրքիայի արեւելեան եզերքի և պարսկական սահմանագծի վրայ: Սահմանները հասնում են արեւելքից մինչև Պարսկաստան (Ուրմի, Սալմաստ, Խոյ և մասամբ Մակու), հիւսիսից Կարինի կամ Էրզրումի նահանգ (Հին Բայազետ), արեւմուտքից Բիթլիզի կուսակալութեան (Բոհաւան, Սղերդ, Խիզան, Դատուան), իսկ հարաւից Մուսուլի նահանգ: Ահա այս սահմանների մէջ ամփոփուող տարածութիւնը գրեթէ բոնում է հին Հայաստանի Վասպուրական նահանգի տեղը, այս գլխաւոր տարրերութեամբ միայն, որ ներկայ Վանը հիւսիսից սեղմուած է, իսկ հարաւից աւելի ընդարձակուած է: Վանի նահանգն այժմ գետեղւում է մօտաւորապէս արեւել. երկ. 40° — 42° / $^{\circ}$ -ի և հիւս. լայն. 37° — 39° / $^{\circ}$ -ի մէջ և ունի 39300 քառ. քիլոմետր տարածութիւն: Ներկայնութեամբ ձգուած է հիւսիսից դէպի հարաւ, Կարինից

դէպի Մուսուլ, իսկ լաշնութեամբ՝ արեւելից արեւմուտք, սեղմուած է Պարսկաստանի և Բիթլիզի միջև: Եթէ փորձելու լինենք ձիու սովորական գնացքով կտրել այն ճամբան, որ ընկնում է հիւսիսային և հարաւային ամենահեռու կէտերի մէջ և ոչ թէ ուղիղ գծով—որովհետեւ հնարաւոր չէ—լեռներ, ձորեր, գետեր արգելք կը լինեն—այլ երթեկութեան ճանապարհով, առնուազն հարկաւոր է 7 օրուգիշեր ժամանակ. իսկ արեւելից արեւմուտք նոյն ձևով հարկաւոր է 4 օրուգիշեր:

Իր մեծութեամբ Վանն Ասիական Թիւրքիայի նահանգների մէջ 16-րդ տեղն է բռնում: Այսինքն 21 նահանգներից 15-ը Վանից տարածութեամբ մեծ են մէկ, մէկ ու կէս, մինչև երեք անգամ, իսկ 5 նահանգ՝ Վանից փոքր են, բայց Եւրոպական Թիւրքիայի բոլոր նահանգներից էլ մեծ է: Ընթերցողին աւելի որոշ գաղափար տալու նպատակով այստեղ դնում եմ Թիւրքիայի ասիական և եւրոպական նահանգները իրանց տարածութիւնը որոշող թւանշաններով միասին (այս թւանշանները քաղուած են պետական-պաշտօնական սահման—տարեցոյց կոչուած գրքոյքից): Նահանգները դասաւորում եմ իրանց ընդարձակութեան կարգով:

Ասիական Թիւրքիա

1. Հիջազ — 250,000	քառ.	բիլ.	17. Դիարբէ- բէր — 37,500	քառ.	բիլ.
2. Նէմէն — 191,100	»	»	18. Մէմլիքէթ- Իւլ-Աղիզ — 32,900	»	»
3. Բաղդատ — 141,300	»	»	19. Տրապիզոն — 32,400	»	»
4. Բաւրա — 138,800	»	»	20. Բիթլիզ — 27,100	»	»
5. Քոնիա — 102,100	»	»	21. Բէյրութ — 16,000	»	»
6. Չամ (Սիւ- բիա) — 95,000	»	»	Միջեղրականի կղզիներ		
7. Մուսուլ — 90,000	»	»	22. Աէջայիբի Բահ- բի Մէֆիզ — 6,900	»	»
8. Հալէբ — 86,000	»	»	Եւրոպական Թիւրքիա		
9. Սիւս — 83,700	»	»	23. Էդիրնէ — 39,050	»	»
10. Էնկիւզլի — 70,900	»	»	24. Սեւանիկ — 35,450	»	»
11. Այդն (Իզ- միր) — 55,900	»	»	25. Կոստոլա — 31,350	»	»
12. Քասթէ- մոնի — 50,700	»	»	26. Մանասթըր — 27,700	»	»
14. Էրզրում — 49,700	»	»	27. Նանիա — 18,250	»	»
15. Ադանա — 39,900	»	»	28. Կ.-Պոլիս — 13,712	»	»
16. Վան — 39,300	»	»	29. Չըողբա — 11,700	»	»

Ինչպէս երևում է այս ցուցակից, Վանի կուսակալութիւնը մօտաւորապէս Ադանային հաւասար է իր ծաւալով: Եւրոպական տէրութիւններից միայն Դանեմարքան իր ծաւալով կա-

բելի է համեմատել Վանի հետ, որովհետև ընդամենը 480 քառ. քիլոմետրով հազիւ մեծ լինի Վանից: Նրա տարածութիւնն է 39,780 քառ. քիլոմետր:

Վանի դիրքը 6,000 ոտնաչափ բարձրութիւն ունի ծովի մակերևոյթից. ընդհանրապէս լեռնոտ է և մակերևոյթը չափազանց խորդուրդ է, որովհետև կտրտուած է բազմաթիւ ցածր ու բարձր, կարճ, երկայն, նեղ և լայնանիստ լեռնաշղթաներով, լեռնաբլուրներով, ձորերով, սարահարթերով, հովիտներով և դաշտավայրերով: Լեռներն ընդհանրապէս գոգաւոր են: Նշանաւոր լեռնաշղթաներից կամ գագաթներից յիշենք այստեղ մի քանի կարևորները: Նահանգի արևելեան մասում Չուխ և Կարասար լեռները, որոնք ձգւում են հարաւից-հիւսիս և խառնուրում պարսկական լեռների հետ: Հարաւում տարածւում են Մոկսի, Շատախի և Նորգուզի լեռները: Հիւսիս-արևելեան մասում նշանաւոր է Սիփան լայնանիստ և բարձրագագաթ հրաբխային լեռը, որ մօտ 12,000 ոտնաչափ բարձրութիւն ունի. հիւսիսում Վանի և Բայազետի սահմանագծի վրայ երկարանում է Կըլք դաղ կամ Մաղկանց լեռը, որ յայտնի է նոյնպէս Ալա դաղ անունով: Նահանգի կենտրոնական մասերում տարածուող լեռներից նշանաւոր են՝ Վարագայ լեռնագագաթը, որ 10,000 ոտնաչափ բարձրութիւն ունի, Տորոսի լեռնաշղթայի ճիւղերից Արտոս, Ընձաք և Շղերով, ինչպէս նաև ուրիշ շատ մեծ ու փոքր լեռներ, որոնք ձգուած են ոչ թէ միևնոյն, այլ տարբեր ուղղութեամբ:

Վանը որքան որ կտրտուած է բազմաթիւ լեռներով, բայց և այնպէս ունի ընդարձակ դաշտավայրեր, լեռնադաշտեր, դաշտաձև և ձորաձև հովիտներ և ընդարձակ արօտավայրեր: Դաշտերից ամենանշանաւորն է իր ընդարձակութեամբ՝ արևելեան հիւսիսային մասում Աբաղայի դաշտը, որի սահմանը մէկ կողմից հասնում է մինչև Բայազետ. այս դաշտում, պատմում են, որ երբեմն գոյութիւն են ունեցել 300-ի չափ գիւղեր, իսկ այժմ հազիւ թէ 3—400 տուն բնակիչ ունենայ: Աբաղայի դաշտին համարեա կից դէպ արևմուտք փռւում է Գործոթի կամ Բերկրու դաշտը. նշանաւոր են նոյնպէս Սարայի դաշտը, Արջակի դաշտը: Լեռնադաշտերից նշանաւոր են՝ Դաւաշի փոքր լեռնադաշտը, որ ձգւում է Վանի լճակի հարաւ-արևելեան ափի վրայ, Աղբակի, Էրմանից և ուրիշ լեռնադաշտեր: Դաշտաձև հովիտներից յիշենք միայն Վան քաղաքի հովիտը, ձորաձև հովիտներից՝ Հայոց-Ձորը: Ձորերից և կիրճերից նշանաւոր են Գիւլգէլ-դէբէն, Զիլանայ ձորը, Շատախի և Նորգուզի ձորերը և ուրիշները: Լեռների վրայ և ձորերում ու հովիտներում փռուած

են ընդարձակ տարածութեամբ մարգագետիններ և արօտավայրեր:

Լեռներով և ձորերով հարուստ այսպիսի մի տարածութիւն հարուստ է նաեւ ջրերով. արդարեւ անցորդը Վանի կուսակալութեան սր մասունն էլ որ ճանապարհորդելու լինի, ամեն քայլափոխում կարող է հանդիպել բազմաթիւ վճիտ և պղտոր, մեծ ու փոքր, պաղ և կաթնահամ, սրընթաց և յամրաքայլ գետերի, գետակների, առուների, աղբիւրների, լճերի կամ լճակների (գետիկների):

Կարապար լեռների փէշերից բղխող բազմաթիւ աղբերակներից կազմուած է Տիգրիս գետի մի մեծ ճիւղը, որ յայտնի է Զաք անունով, որը հոսելով դէպի հարաւ՝ Մուսուլի մօտերը միանում է Տիգրիսի հետ: Նոյն Կարասար լեռան հարաւ-արեւմտեան ստորոտներից բղխող աղբիւրների ջրերը Զուխ լեռան արեւմտակողմերի ջրերի հետ միանալով՝ կազմում են Սոշաբայ կամ Անգղայ գետակը, որ հոսելով դէպ արեւմուտք՝ թափւում է Վանի լճակի մէջ: Երասխի աջակողմեան վտակներից Կարմիր կամ Կոտուլայ գետակը իր սկիզբը նոյնպէս յիշեալ լեռնաշղթայի փէշերից է առնում: Բազի գաղից հոսում է Սև կամ Մարմետի գետը, որ Աղբուլաղայ ջրերի հետ միանալով, նոյնպէս դէպ արեւմուտք հոսելով, թափւում է Վանի լճակի մէջ: Արեւելեան Տիգրիսն իր սկիզբն առնում է Նորդուզի լեռներից, որ միանում է Կասրեկայ, Շատախի, Մոկսի գետակների հետ և հոսելով դէպ արեւմուտք՝ խառնւում է արեւմտեան Տիգրիսի հետ: Կըլըջ գաղից բղխում է Օրօրան գետակը. Արաղայի գաշտի լեռներից հոսում է Բէնդիմահու գետակը. թէ սա և թէ Օրօրանը նոյնպէս թափւում են Վանի լճակի մէջ: Սարբուլաղ կոչուած լեռնաբլրի ստորոտից բղխում է Շամիրամայ առուն. Վարագայ լեռան փէշերից բղխում են Կուռուպաշայ և Անկիւաների առուները, վերջին երեք առուները հոսում են դէպի արեւմուտք և թափւում են Վանի լճակի մէջ: Կան ուրիշ բազմաթիւ գետակներ և առուներ, որոնք զանազան ուղղութեամբ կտրտում են Վանի մակերևոյթը: Վանի նահանգին պատկանող լճերից և լճակներից կամ գետիկներից յիշելու արժանի են՝ Վանի լիճը, որի մի փոքր մասը—արեւմտեան ափը պատկանում է Բիթլիզի նահանգին, Արճակ լճակը, որին տեղացիները ծով են անուանում, Բեշիշ Գիւլը, Սպահան, Աղ, Քուի, Տոնի, Մղկայ լճակները:

Այս բոլոր գետերը, գետակները, առուները և լճակները առատութեամբ ոռոգում են իրանց աջ ու ձախ ափերի վրայ փռուած հողերը, որով Վանի նահանգի մշակելի համարուած հողերի յեծագոյն մասը ջրարբի է դառնում, իսկ հազիւ թէ

մի փոքր մասն անջրդի: Չմոռանանք յիշել, որ լճակներից մի քանիսն էլ արհեստակտն կերպով են կազմուած ջուր ամբարեջուռ և կարևոր տեղեր ուղղելու համար. այս կարգին է պատկանում Գեղի զեղը:

Երկու խօսք էլ հողի կազմութեան մասին: Մեծ մասամբ Վանի հողը փխրուն-կակուղ է, գորշ գոյն ունի. կան նաև ընդարձակ տարածութեամբ աւաղախառն սև հողեր, քիչ տարածութեամբ կան կարմրագոյն և սպիտակագոյն հողեր. սրանցից աւելի ընդարձակ տեղ են բռնում քարքարոտ-աւազոտ կամ աւելի ճիշտ խճոտ հողերը:

Ինչպէս յայտնի, է թիւրքիան ընկնում է հիւսիսային բարեխառն գոտու տակ. Վանն էլ իր բնական երկրի հարաւային մի փոքր մաս՝ նոյն գոտուն է պատկանում, ուրեմն բարեխառն կլիմա ունի. սակայն ինչպէս ամեն երկրի մակերևոյթի կազմութեան ձևն առանձին ազդեցութիւն է գործում կլիմայի վրայ, նոյնպէս և Վանի դէպքը՝ զանազան մասերի միմեանց նկատմամբ ունեցած բարձրութիւնը կամ խորութիւնն, ինչպէս նաև զանազան ուղղութեամբ ձգուած ցածր ու բարձր լեռները և ձորերը մեծ փոփոխութիւն են առաջ բերում Վանի կլիմայի մէջ: Այս կէտի վրայ երկար կանգ առնելը մեր ծրագրից դուրս լինելով, բաւականանում ենք մի քանի ընդհանուր խօսքերով որոշել Վանի կլիման: Հարաւից դէպի հիւսիս երթալով՝ Վանի դէպքը հետզհետէ բարձրանում է. դրա համեմատութեամբ էլ քանի հիւսիս բարձրանանք, օդի ցրտութեան աստիճանը բարձրանում է, իսկ հարաւի գաւառները աւելի և աւելի են մեղմանում: Եթէ համեմատենք Վանն իր կլիմայով շրջակայ նահանգներին հետ, պիտի տեսնենք, որ արևելեան սահմանակից նահանգ Ատրպատականը (պարսկական հող) և արևմտեան սահմանակից նահանգ Բիթլիզը Վանից տաք կլիմա ունին. հարաւային սահմանակից նահանգ Մուսուլն անհամեմատ աւելի տաք է նոյնպէս, միայն հիւսիսային կողմն ընկնող Կարինի բարձրավանդակն է, որ գերազանցում է Վանն իր ցուրտ կլիմայով:

Հիւսիսում և հիւսիս-արևելքում տարածուող սարահարթերը և դաշտավայրերը—Զիլանայ ձորը, Աբաղի և Խոշաբ գաւառը շրջապատող դաշտերն ու ձորերը ցուրտ կլիմա ունին. ձմեռը ցրտութեան չափը այս տեղերը հասնում է 25—30 աստիճանի Տեմպերի ջերմաչափի վրայ, իսկ ամառն ամենատաք ժամանակ 15⁰-ից չի բարձրանում: Այս տեղերում համարեա թէ ամառը գոյութիւն չունի. վեց ամսից աւելի ձմեռ է տիրում: Իսկ հարաւային գաւառներում—Ջուլամբերկի, Բէյթ-իւլ-Շիւքաբէ և Մոկսի կողմերն ընդհակառակն է— ձմեռը լինում է մեղմ և կարճատև,

իսկ ամառը տաք և երկարատև, թէև նոյնիսկ այս տեղերում— օրինակ Մոկաց լեռներում—ամառուան մէջ իսկ ճանապարհորդը մէկ օրուայ ընթացքում կարող է հանդիպել տարուա չորս եղանակներին միանգամայն: Վանի լճակի շուրջը փոռնող դաշտավայրերն ունին մեղմ-բարեխառն կլիմա:

Ձմեռուան մէջ ընդհանրապէս հիւսիսից փչում է ցուրտ քամի, որ աւելի ոյժ է տալիս ցրտի խստութեանը և սառցընում հոսուն ջրերը, ինչպէս նաև ձիւնի շերտերը, իսկ գարնան ժամանակ փչում է հարաւային կողմից տաք քամի, որ միանալով գարնանային յորդահոս անձրեւների հետ՝ կարճ ժամանակի մէջ հալեցնում է ձիւնի թանձր խաւերն և սառցակոյտերը: Բացի այս երկու միմեանց հակառակ ուղղութեամբ փչող գլխաւոր քամիներից՝ Վանի իւրաքանչիւր գաւառն իր մէջ և շուրջը դանազան ուղղութեամբ ձգուած լեռնաշղթաների պատճառով քամիների տարբեր հոսանքներ է ունենում:

II

Քերքերը.—բուսականութիւնը. կլիմայի ազդեցութիւնը բուսականութեան վրայ. երկրագործական բերքերն և մշակութեան յարմար տեղերը. մշակուած հացահատիկների, իւղալից հումքերի, բանջարեղէնների, ծաղիկների, պտղատու և անպտուղ ծառերի տեսակները: Վնդանիները.—ծովային կենդանիները. թռչունները. միջատները. սողունները: Հանքային նիւթերը.—հանքերի վիճակը. աղ. նաւթ:

Վանի նահանգի դիրքի, մակերևոյթի կազմութեան, հողի, ջրի և կլիմայի մասին խօսելուց յետոյ ընթերցողին ներկայացնենք Վանի բերքերը, որոնց մէջ առաջին տեղն է բռնում բուսականութիւնը, որի վիճակն ամենասերտ կերպով կապուած է յիշեալ հանգամանքների հետ: Հողն իր կազմութեամբ, ջուրն իր առատութեամբ բաւականապատուող հանգամանքներ են ներկայանում Վանի բուսականութեան, սակայն միւս կողմից Վանի դիրքը իր բարձրութեամբ, լեռնաշղթաներն իրանց բարձրութեամբ և այս պարագաների պատճառով կլիման իր խստութեամբ անընդատ պայմաններ են ներկայացնում, որով Վանի մէջ հազիւ են աճում ցուրտ-բարեխառն կլիմաներին յատուկ բոյսեր, որոնք աղքատ են թէ սեռի կողմից և թէ տեսակի փարթեմութեամբ: Հացային կոչուած կլիմաների բոյսերն ընդհանրապէս բաւարար են ներկայանում: Հացահատիկներից Վանը բուցնում է իր մէջ մեծ քանակութեամբ ցորեն, ապա գարի, տարեկան (հաճար), վարսակ, կորեկ, եգիպտացորեն: Հացահատիկների արտերը մշակւում են տարին կամ երկու տարին մի

անգամ. արտերը սերմանում են կամ աշնանը կամ գարնանը, իսկ հունձը կատարւում է յուլիսի սկզբներից մինչև երբեմն սեպտեմբերի սկզբները: Լեռնային տեղերում երբեմն պատահում է, որ կանխահաս ցրտերի պատճառով ցանքերը չեն կարողանում հասունանալ: Առատ և ընտիր հացահատիկ արտադրող հողերը գտնւում են՝ Ալշլաւզի, Արճէշի, Բերկրու, Խոշաբի, Գաւաշի, Կարճկանի, Թիմարի, Զուլամերկի գաւառներում և գաւառակներում: Ցորենի բերքը սովորական չափով է. միջակ նպաստաւոր պայմաններում յիշեալ տեղերում միջին հաշւով լինում է մէկին 10—20, իսկ առատաբեր տարիներում կրկնապատիկ և աւելի, ինչպէս 1900-ին Բերկրիում և ուրիշ շատ տեղերում երկրագործները մէկի փոխարէն վաթսուն ցորենի բերք են ստացել: Անշրդի (տեղացոց գործածութեամբ ոստին-դէմ) տեղերում եթէ ժամանակին անձրևներ տեղան, ցորենի և առհասարակ բոլոր հացահատիկների բերքը ջրարբի տեղերից աւելի արդիւնաւոր և առատ է լինում. օրինակ՝ Վանի Թիմար կոչուած մասի հողերն ընդհանրապէս անշրդի են, իսկ Հայոց-Ձոր կոչուած մասի հողերն ընդհակառակը ջրային են. անձրևային տարիներում Հայոց-Ձորը բերում է մէկին 10—15, իսկ Թիմարը 25—35: Աւելի արդիւնաւոր է լինում վարսակի բերքը, որ տալիս է մէկին 500—700 և աւելի. սա մշակւում է միայն Դիարի մէջ, ուր մշակելի հողը չափազանց քիչ լինելու պատճառով ցորեն մշակել անկարելի է, այլ միայն վարսակ:

Իւղալի հունդերից մշակւում են՝ կտաւատ, որից տեղացիները պատրաստում են ուտելու և վառելու ձէթ, կանեփատ, շատ քիչ քանակութեամբ նաև սուսամ (գնջութ):

Կը թւեմ այստեղ Վանի նահանգում բուսնող և մշակւող արմտիքների—բանջարեղէնների, ունդեղէնների, ծաղիկների, ինչպէս նաև ծառերի մի քանի տեսակների ճիշտ այն անունները, ինչպէս որ գործածւում են Վան քաղաքում: Կարելի եղած տեղերում փակագծի մէջ նշակւում եմ դրանց գրական անունները, որոնց գործածութիւնն ընդհանրացած է տաճկահայերի նոր գրականութեան և մեր հին լեզուի մէջ:

Բանջարեղէններից, ունդեղէններից և առհասարակ մշակելի արմտիքներից բուսնում և մշակւում են՝ լնանա (կաղամբ), սոխ, կլմբեոզ (ճակնդեղ), շողգամ (շաղգամ), փաթաթեղ—(գետնախնձոր. սրա մշակութիւնը վերջին 20 տարւայ մէջ է մտել Վան և օրէցօր աւելի ու աւելի է ընդհանրանում), տապղին (ստեպղին) պէտիկ (բողկ), սխտոր, ֆասուլիա (լոբի), բայլա (բակլա), գլիւ (ոլոռն), ոսպ, սիսեռ, արևաբաց ծաղիկ (արևածաղիկ), բիւբար (պղպեղ), պատընջան

(տիմորմ), տոմաթէս (լուիկ), կարոս (ազատքեղ) ռահան (ռեհան), սպանախ (ծմել, շումին), սևաունիճ (սամիթ), տրխուն (թարխուն), տէրաղօթիկ (համեմ), փարփառ (փրփրեմ), նա'նա' (անանուխ), մառուկ (հազար), ծէթրէն (ծոթրին), գինձ, խաշխաշ, կանճրակ, մադրաբօ կայլն:

Վայրենի կամ լեռնային բանջարեղէններից՝ էրժնակ (երընջնակ), մանդակ, սուխակ, գառնուկ, պտուկ, շրէշտ (շրէշ) կայլն:

Սեխաստանի բերքերից՝ դդում, վարունգ, սեխ, ձմերուկ, շամամ:

Վանում իբրև բժշկական նշանակութիւն ունեցող բոյսերից կամ ծաղիկներից յայտնի են՝ լոշտրակ, կապոտ ծաղիկ (օշինդր), դեղին ծաղիկ (ցունկ), եղէճ, ըշրունկ կայլն:

Ներկի բոյսերից՝ տուրուն (տորոն), դեղին ծաղիկ (զաֆրան), գողան (օշնան) կայլն:

Ընտանի և պարտիզի ծաղիկներից՝ վարդ, որ լինում է հնգաթերթ, և թոփուզ (բազմաթերթ), որի զանազան տեսակները հետեւեալ անուններն ունին. քաֆուր (կարմիր, բազմաթերթ), քիշմիշ (մութ կարմիր, հնգաթերթ), դեղին թոփուզ և հնգաթերթ, սպիտակ նոյնպէս, բոզ (բեհեզ) վարդ. սրա ծաղիկների թերթերի մէկ երեսը դեղին է, իսկ միւս երեսը՝ ալ—բացկարմիր: Միւս ծաղիկներից նշանաւորներն են՝ կատիֆա (թաւշածաղիկ), կանաֆիլ (միխակ), մանուշակ, գէշա-սաֆասի (գիշերազուարճ), սարմաշուղ (պատատուկ—այգածաղիկ), բարդի սաբախ (ընտանի շուշան), կակաչ, նաւրուզ, շաբօ (շահպրակ), նարգիզ և ուրիշ բազմաթիւ տեղական և արտասահմանից վերջին տարիներում բերուած ծաղիկներ:

Ծառանման ծաղիկներից՝ լէւաղ (եղրեհնի (?), միւրվէր (թանդրաւենի) և ակացիա:

Լեռնային, դաշտային կամ մարգագետնային ծաղիկներ Վանում բիւրատեսակ են, որոնց անունները միառմի թւել այստեղ ինձ համար անկարելի է, մանաւանդ որ այս կարգի ծաղիկներից հարիւրաւորներն անուն չունին վանեցիկների լեզուով, այլ նրանցից շատերը յայտնի են սարի ծաղիկ, դաշտի ծաղիկ, չիմանի ծաղիկ կամ կարմիր ծաղիկ, սիւտակ ծաղիկ, կապոտ ծաղիկ, դեղին ծաղիկ անուններով: Բաւականանա՞նք միայն յիշելով այստեղ սրանցից իրանց հոտով և գոյնով ամենանշանաւորներից մի քանիսը:

Գնապիւկ (գինեբուկ), իր տեսքով և հոտով սքանչելի այս ծաղիկը բուսնում է այն մարգագետիններում միայն, ուր անընդհատ ջուր է հոսում. կարմիր կակաչ, ախպէրանց արիւն,

անթառամ ծաղիկ, մեռնի ծաղիկ, լօշտրակ (վերը յիշուած իբրև բժշկական բոյս), վայրի շուշան, նաւրուզ (պարտէզներում էլ է մշակւում):

Գալով խոտի մասին՝ Վանի ընդարձակ արօտավայրերը բուսցնում են իրանց մէջ բիւրատեսակ խոտեր, որոնք կանգնում են մարդահասակ բարձրութեամբ և անսպառելի շտեմարան են ներկայացնում Վանի անասնապահութեան համար: Մըշակելի խոտեր են առւոտ (առւոյտ, եօնջա), իշու առւոտ, կորնդան:

Ծառատունկներից նախ յիշենք պտղատունիքը՝ տանձ, խնձոր, ալուչա (սալոր), դամոն, ծիրան, սերկէիլ, գոզ (ընկոյզ), փշատ, թութ, կիւազ (կեռաս), ֆըշնա (բալ), շարդազուկ (դեղձ), պնդիւկ (կաղին, տկողին), նուշ, մինալուզ, ալի-ջահրէ (պտուղները ներկի նիւթ են):

Անպտուղ ծառերից՝ բարդ, ուռ, կաղամախ, սպահան, թեղ, հաց կայլն:

Անտառային անպտուղ և մասամբ պտղատու ծառերից՝ արդուճ (մայրի), կաղնի, գեանի, կնէրի, բտմի, շկլոր, զղեար կայլն:

Ճախճախուտներում բուսնում է եղէգն:

Որթատունկների այգիներում մշակւում են խաղողների մի քանի տեսակները՝ սև խաղող, քիշմիշ խաղող, էծուպտուկ, խիզնա խաղող, սիւտակ խաղող անուններով:

Ինչպէս ցոյց է տալիս բոյսերի այս խիստ համառօտ ցուցակը, Վանը իր մէջ բուսցնում է բոյսերի բաւական շատ տեսակներ, որոնք սակայն զարգացման ակելի ստոր աստիճանի վրայ են գտնւում, որոնց մեծագոյն մասը դարնանային կամ ամառնային զով կլիմայի պէտք ունին. նկատելու արժանի է, որ տաք-բարեխառն կլիմա ունեցող երկրների մի քանի բոյսեր Վանում չեն աճում և եղածներն էլ, ինչպէս վերը յիշեցինք, փաթթած չեն կամ լաւ չեն հասունանում: Աւելի հեռու չերթանք, այլ վերցնենք շրջապատող երեք նահանգները—Ստրպատական, Մուսուլ և Բիթլիզ, որոնց կլիման տեսանք որ Վանից աւելի տաք է. այս նահանգներում մեծ քանակութեամբ մշակուող բամբակը, թուզը, նուռը, բրինձը և խաղողի ընտիր տեսակները Վանում չեն աճում (բացառութիւն է կազմում միայն հարաւային մի փոքր մասը, որ Մուսուլի սահմանի վրայ է ընկնում և նրա կլիման ունի): Նոյնիսկ մի քանի պտուղներ, որոնք Վանում իբրև թէ մշակւում են, խակ են մնում, օրինակ՝ Վանի խաղողը թթու է լինում, փշատը ծառի վրայ չի հասունանում, ալ կրակի վրայ բովելուց յետոյ միայն կարելի է լինում ու-

տել. տանձի, խնձորի մի քանի տեսակները ծառերի վրայ չեն հաստանում, այլ խակ-խակ հաւաքում են այգետէրերը և ձմեռուան ընթացքում հասցնում: Ծխախոտի մշակութիւնը թէև բաւական տեղ է բռնում, բայց դարձեալ միևնոյն պատճառով շատ ետ է մնում շրջակայ նահանգների ծխախոտներից:

Ակներև է, որ այս պայմաններում աճող բուսականութիւնը յաճախ ենթակայ է լինում այնպիսի պատահարների, որոնք սերտ կապակցութիւն ունին Վանի կլիմայի հետ. շատ անգամ ամբողջ նահանգի այս կամ այն մասերի ծառատունկները, որթատունկները խիստ ցրտի, կարկտի ենթարկուելով՝ սառչում են, նոյնիսկ չորանում. այս վտանգից ազատ չեն մընում նոյնիսկ երբեմն-երբեմն և հացահատիկները, որոնք խիստ ցրտից արմատախիլ են լինում:

Այսքանը բաւական համարելով բոյսերի մասին՝ այժմ անցընենք Վանի կենդանիներին: Վանն իր ընդարձակ, բարեբեր, ջրառատ մարգագետիններով և արօտավայրերով խիստ նպաստաւոր պայմաններ է ներկայացնում անասնապահութեան համար. այդ հանգամանքի շնորհիւ Վանում ընտանի անասուններից պահում են մեծ քանակութեամբ այնպիսի կենդանիներ, որոնք կարող են դիմանալ Վանի կլիմային, որոնց մէջ ամենամեծ տեղը բռնում են ոչխար և այծ, ապա կով, եզ, գոմէշ, ձի, ջորի, էշ: Լեռնային կամ վայրի կենդանիներից կան՝ այծեամ, խոզ, արջ, գայլ, աղուէս, կուզ, նապաստակ, ճագար, ջրշուն, ոզնի կայլն:

Գետերի և լճերի մէջ կան զանազան տեսակ ձկներ, որոնց մէջ ամենամեծ տեղը բռնում է տառելի ձուկը:

Թռչուններից—ընտանիների՝ հաւ, աքլոր, սագ, բադ, հընդկահաւ, սիրամարգ: Տարագնաց թռչուններից՝ արծիւ, անգղ, ցին, բազէ, կռունկ, ծիծեռնակ, սարեակ, սոխակ, լրծէ-լրծէ, լոր, ապրունակ, տատրակ, բու, դեղձանիկ, սև ագռաւ, թռչող կաթնասուններից՝ չղջիկ:

Այս թռչունները գարնան սկզբներում հարաւից դէպի Վան փոխադրուելով՝ բոյներ են դնում լեռներում, ծառերի գագաթների վրայ, տների կտուրների և պատերի ճեղքներում, արտերի մէջ և մինչև աշնան սկզբներն իրանց ձագերը մեծացնելուց յետոյ հեռանում են դարձեալ իրանց ձմեռանոցները:

Մշտակեաց թռչուններից Վանում կան՝ ագռաւ, կաչաղակ, ճնճղուկ, աղաւի:

Կարծեմ աւելորդ չի համարուիլ, եթէ այստեղ յիշեմ Վանում գտնուող սողունների, միջատների և զեռունների մի քանիների անունները.—օձ, կարիճ, մողէս, կանաչ մատոտ, սարդ, ճանճ, մոծակ՝ քիչ քանակութեամբ, այն էլ աւելի արեգդէմ տե-

դերում), խխունջ, կաթոռիկ, մլուկ, թիթեռնիկ, իշամեղու, սև գղէղ, ընտանի մեղու (գլխաւորաբար Մոկսի և Կարճկանի մէջ):

Ճահիճներում և ջրերում զանազան տեսակ գետուհներ, ինչպէս նաև գորտ, կրիայ, խեցգետին կային:

Վանի նահանգը հարուստ է հանքային նիւթերով, որոնք սակայն մինչև այժմ անձեռնմխելի են մնում և դեռ երկար ժամանակ հողի տակ պիտի մնան: Յիշենք այստեղ մեր իմացածները միայն.— Գաւաշի, Կարճկանի, Շատախի, Նորգուզի, Զուլամերկի լեռներում կան երկաթի, պղնձի, գառիկի, քարածուխի, կապարի հանքեր:

Բերկրիում՝ նոյնպէս քարածուխի, ծծումբի և մանաւանդ նաւթի հանքեր *): Բաշկալէի Սորատէր գիւղի մօտ կայ կաւիճի հանք: Արճակի էրմանց գիւղի մօտ կայ քարածուխի հանք: Թիմարի Զանիկ գիւղն ունի կարմրագոյն աղի աղբիւր: Զանազան մասերում կան նաև սպիտակ և գունաւոր մարմարիոնի հանքեր: Վանն ունի նոյնպէս հանքային ջրեր և ջերմուկներ զանազան մասերում, որոնց մէջ ամենանշանաւորն է Արճէշի ջերմուկը (իլիշէ), ուր ամեն տարի բազմաթիւ ուսմատիզմ հիւանդութիւն ունեցողներ դիմում են լողանալու և բժշկուելու:

Վանի նահանգի հանքերը դեռ լաւ ուսումնասիրուած չեն. հաւանական է, որ Վանը ենթադրուածից աւելի մեծ քանակութեամբ և բազմատեսակ հանքեր ունի, բայց ինչպէս արդէն վերը յիշեցինք, ներկայումս ոչ մի հանք էլ չի շահագործուում: Երբեմն—10-15 տարի առաջ Զուլամերկում շահագործուում էր գառիկի հանքը, և գառիկը ուղարկուում էր գլխաւորաբար Պարսկաստան, այժմ այդ էլ դադարած է: Զանիկ գիւղի աղի աղբիւրը իր տուած դիւրութեամբ շահագործուում է և մատակարարում է մասնաւորապէս Վան քաղաքի բնակիչների գործածութեան համար մաքուր, համեղ և շատ ընտիր կարմրագոյն աղ, որ գերազանցում է թէ քարաղը և թէ Արզրումի նահանգին պատկանող Խնուաի ճերմակ աղը, որը նոյնպէս աղբիւրից է պատրաստուում:

Գործոթ գիւղի նաւթի լճերի մակերևոյթի վրայ փոռած նաւթի նոսր շերտը տեղացիները շորերով հաւաքում են և

*) Բերկրի գաւառակի Գործոթ կոչուած գիւղի հողերում երեացած նաւթահանքերը շահագործելու նպատակով վանեցի նազարէթ Առաւղեան գործոն անձը երկար ժամանակ ջանք թափեց կառավարութիւնից արտօնութիւն ձեռք բերելու, սակայն երբ անցաւ Բագու այնտեղ գործնականապէս նաւթաբերութեան գործն ուսումնասիրելու նպատակով, այնտեղ շահագործների ձեռքով սպանուելով, անկատար մնաց այդ գաղափարը մինչև այժմ:

գործածում: Ոմանց կարծիքով Գործոթի այս նաւթահանքերը շատ ընդարձակ տարածութեամբ տեղ են բռնում: Շատ անգամներ են կառավարութեան դիմումներ եղել այս կամ այն անհատների և ընկերութիւնների կողմից՝ այս նաւթահանքերը շահագործելու փորձեր անելու համար արտօնութիւն ձեռք բերել, բայց մինչև այսօր այդ նպատակով եղած բոլոր դիմումները անհետևանք են մնացել:

Ո՛վ գիտէ, գուցէ այս նաւթահանքերից էլ աւելի արդիւնաբեր հանքեր կան Վանի նահանգի այս ու այն լեռների կրճքում, բայց դրանք դեռ երկար պիտի մնան իրանց տեղուկ կուսական վիճակի մէջ...

III

Նահանգական-վարչական կազմը.—վարչական բաժանումները. սանջաք, կազա, նահիէ, վարիշ մարմինները. վարչական ժողովների կազմութիւնը և անդամների ընտրութեան ձևը. կայմակաւմների ընտրութեան ներկայ ձևը:

Վանի բնակչութեան մասին խօսելուց առաջ անհրաժեշտ ենք համարում ընթերցողին ծանօթացնել Վանի վիլայէթի վարչական կազմութեան հետ: Ամենավերջին (1902 թ.) տնօրինութեան համաձայն հետևեալ բաժանումներն ունի:

Վան վիլայէթը բաժանւում է սանջաքների կամ միւթէսէրիֆութեան. սանջաքները բաժանւում են կազաների, իսկ կազաները՝ նահիէների:

Սանջաք (կամ միւթէսէրիֆը և լիւա) թիւրքական պաշտօնական բառը հայերէն որոշ թարգմանութիւն չունի, թիւրքահայ գրականութեան մէջ զանազան ձևերով է գործածւում, ոմանք գաւառ են թարգմանում, ուրիշները՝ վիճակ, շրջանակ կայլն: Աւելի ընդհանրացած է գաւառ ասել, ուստի մենք էլ սանջաք թարգմանում ենք գաւառ: Կազա բառը թարգմանում ենք գաւառակ, իսկ նահիէ—գիւղախումբ:

Վանի կուսակալութիւնն ունի երկու գաւառ՝ Վան և Հէքքեարի կամ Բաշկալէ (այս գաւառը մինչև 80-ական թւականները Վանից անկախ առանձին կուսակալութիւն էր, իսկ յիշեալ թւից իբրև գաւառ միացած է Վանին):

Վանի գաւառն ունի 6 գաւառակ և 6 գիւղախումբ:

Գաւառներն են.

Գիւղախմբերն են.

1. Վան,
2. Մահմուդիէ,
3. Շատախ,

1. Հայոց-Ձոր,
2. Թիմար,
3. Արճակ.

4. Ադիլջաւադ,
5. Արճէշ,
6. Գաւաշ.

4. Բերկըի,
5. Կարճկան,
6. Մոկա.

Գիւղախմբերից առաջին չորսը վարչականապէս Վանի գաւառի իրաւասութեան են ենթարկուած, իսկ վերջին երկուսից—Կարճկանը՝ Գաւաշին, իսկ Մոկսը՝ Շատախին:

Վանի գաւառն իր չորս գիւղախմբերով միասին ունի 293 գիւղ,

Գաւաշը իր գիւղախմբովն ունի 129 գիւղ.

Շատախը՝ 215,

Մահմուդիէն 83 գիւղ,

Ադիլջաւադը՝ 44 գիւղ,

Արճէշը՝ 122 գիւղ.

Ուրեմն Վան գաւառն ունի ընդամենը 886 գիւղ:

Հէքքեարի կամ Բաշկալէի գաւառն ունի 6 գաւառակ.

1. Բաշկալէ, որ ունի . . . » » 144 գիւղ,

2. Զիւլամերկ . . . » » 165 »

3. Գէւար . . . » » 184 »

4. Շէմդինանդ . . . » » 131 »

5. Մէմիւրէթ-իւլ-Համիդ » » 34 »

6. Բէյթ-իւլ-Շիւբար » » 31 »

Ընդամենը 689 գիւղ

Ուրեմն երկու գաւառները միասին կամ ուրիշ խօսքով ամբողջ Վանի նահանգն ունի ընդամենը 1575 գիւղ:

Նահանգական քաղաքն է Վան քաղաքը, գաւառական քաղաքն է Բաշկալէ քաղաքը: Կան նաև մի քանի՝ այսպէս ասած՝ գիւղաքաղաքներ. Գէւար, Ականց, Բերկըի, Շատախի Թաղ, Մոկսի Թաղ և այլն:

Նահանգի կառավարիչը պաշտօնական լեզուով կոչուած է վալի—կուսակալ (նահանգապետ—губернаторъ), գաւառի—սանջաքի կառավարիչը կոչուած է միւթէսէրիֆ—գաւառապետ, գաւառակի—կազայի կառավարիչը կոչուած է կայմակամ—գաւառակապետ, իսկ գիւղախմբի—նահիէի կառավարիչը կոչուած է միւդէր—գիւղախմբապետ:

Գիւղախմբերը կառավարուում են միայն գիւղախմբապետներով, իսկ գաւառակիները, գաւառը և նահանգը կառավարւում են վարչական ժողովներով—իդարէ մէշլիսիով: Գաւառակային վարչական ժողովն ունի 6—8 անդամ: Գաւառական վարչական ժողովն՝ 8—10 անդամ: Թէ գաւառակի և թէ գաւառի վարչական ժողովի անդամները ընտրւում են տեղական ժողովրդի քուէով, իսկ նախագահները, այսինքն գաւառակապետ-

ներն ու գաւառապետներն իբրեւ կառավարիչներ ընտրուած են Պոլսում ներքին գործերի նախարարութեան կողմից (նահանգական վարչական ժողովի մասին ընդարձակ տեղեկութիւններ թողնում ենք յետագայ էջերի մէջ, երբ մեր խօսքը Վան քաղաքի մասին հասցրած կը լինինք)։

Թէև գաւառակապետը և գաւառապետն, ըստ օրինի դպրոցական պիտի լինին, սակայն օրէնքը դեռևս ճշտութեամբ չի գործադրուած, որովհետև այս օրէնքը դեռ նոր է, իսկ դրանից առաջ այդ պաշտօնը վարողներն իրաւունք ունին մնալու իրանց պաշտօնի մէջ։ Օրէնքի բացառութիւնը քիւրդ գաւառակապետների մասին է։ Ինչպէս յայտնի է՝ կիսավայրերի քիւրդ տարրը մինչև այժմ դեռ գաղափար չունի օրէնքների, դիսցիպլինայի մասին։ Քիւրդերը իրանց իշխող են ճանաչում միայն իրանց էլաղասիներին։ Կառավարութիւնը նկատելով, որ օրէնքի տառացի գործադրութիւնը քիւրդերի շրջանակում իր սկզբնական քայլափոխին կարող է խոչընդոտների պատահել՝ քրդական կոպիտ եսասիրութեան վերաւորանք պատճառելով, առայժմ գաւառակապետի կամ կայմակամի պաշտօնը մի քանի գաւառակներում թողել է քիւրդ էլաղասիների վրայ։ Սակայն քիւրդերը տեսնելով, որ ապագան դպրոցականներին է, սկսել են իրանց որդիներն ուղարկել կայսերական դպրոցներ, որպէսզի ինչպէս ցեղապետութիւնն անցեալում, նոյնպէս էլ միւլդիրութիւնը, կայմակամութիւնը կամ պետական ուրիշ պաշտօնները ապագայում իրանց ձեռքում մնան։ Անշուշտ շատ կարճ ժամանակից յետոյ պիտի տեսնենք, որ Վանի գաւառական պաշտօնները քրդական բնակավայրերում քիւրդերին պիտի տրուած լինին։

Ներկայումս Վանի նահանգի գիւղախմբապետների և գաւառակապետների մեծ մասը (քրդական երկրներում) ընտրուած է նախկին ցեղապետ քիւրդ բէգերից և աղաներից։

IV

Բնակչութիւնը։—Կանոնաւոր վիճակադրութեան բացակայութեան պատճառները, Բնակիչների թիւը 1883-ի մարդահամարի համաձայն, համեմատութիւն ներկայի հետ։ Բնակչութեան զբաղումը. երկրագործութեան ձևը և յարմար տեղերը. անասնապահութեան վիճակը և յարմար տեղերը, Երկրորդական զբաղումները. —այգեգործութիւնը, պարտիզպանութիւնը, մեղուարուծութիւնը, շերամապահութիւնը, ձկնորսութիւնը, որսորդութիւնը, արհեստները, շաւղործութիւնը։

Վանի կուսակալութեան պատկանող բնակչութեան ճիշտ թիւը որոշել շատ դժուար, նոյնիսկ անկարելի է, որովհետև

մինչև այժմ կանոնաւոր մարդահամար չի եղել Վանում, եղածըն անկանոն է, և եթէ ներկայումս էլ լինի, դարձեալ անկանոն պիտի լինի. դրա գլխաւոր պատճառներն են հետեւեալ հանգամանքները:—Վանի աղքատակութեան կարևոր տարրերից քիւրդերը և ասորիները դեռ ևս կիսավայրենի վիճակի մէջ գտնուելով՝ աստանդական կեանք են վարում. այսօր տեսնում էք որեւէ գիւղի սահմաններում 5 տուն քիւրդ կայ, իսկ վաղն առաւօտ՝ ոչ մի տուն, հեռացել են ուրիշ տեղեր: Այնպիսի մութ անկիւններ կան նահանգի հարաւային մասերում՝ ասորիները և քրդերի բնակավայրերում, ուր մինչև այսօր կառավարութեան պաշտօնեայի երես չեն տեսել: Սրա վերայ աւելացրէք պետական հարկերի խնդրի հետ սերտ առնչւթիւն ունեցող մի ուրիշ հանգամանք. քրիստոնեայ հպատակները—հայերը և ասորիները զինւորի փոխարէն զինւորական տուրք պէտք է վճարեն. ամէն ընտանիք քաղաքներում, մանաւանդ գիւղերում աշխատում է արական սեռին պատկանող իր անդամների ճիշտ թիւը պահել կառավարութիւնից, որպէսզի տուրքի բաժին քիչ ընկնի իրան: Եւ այս կողմից ասորի և հայ գիւղացիները այնքան զգոյշ են, որ շատ անգամ հասարակ կամ պատահական անցորդներին—լինի դա հայ, տաճիկ կամ մի ուրիշ ցեղի պատկանող անհատ—ճիշտ չեն յայտնում իրանց գիւղի բնակիչների կամ տների ճիշտ թիւը: Ահա այս և սրանց նման դեռ ուրիշ շատ պատճառներ—որոնք արդիւնք են կենտրոնից բոլորովին հեռու գտնուող Վանի տեղակայն հանգամանքների—հաստատում են, թէ Վանում դեռ ևս կարելի չէ պաշտօնական կանոնաւոր մարդահամարի գործողութիւն կատարել: Ուրեմն պարտաւորուած պիտի բաւականանանք մօտաւոր հաշուով:

1883 թւին կատարուած պաշտօնական մարդահամարի համաձայն Վանում բնակիչների թիւը հասնում էր ընդամենը 350,000-ի. այդ թիւը, եթէ ընդունենք, թէ պակաս չէ, այլ ուղիղ է, պէտք է որ 20 տարւայ ընթացքում դոնէ 50—60000-ի յաւելում լինէր, որով առնուազն 400,000 բնակիչ պիտի ունենար Վան նահանգը ներկայումս. սակայն մեր հաւաքած տեղեկութիւնները որքան աշխատենք մօտեցնել այդ թւին, դարձեալ կարելի չէ: Առանց կարևորութիւն տալու վայրիվերոյ յայտնուած զաղափարներին, որոնք միմիանց հակասելուց զատ ուրիշ որեւէ հիմք չունին, մենք դնենք այստեղ յիշեալ մարդահամարի ցոյց տուած թւանշանները իւրաքանչիւր աղքատակութեան մասին և ապա նշանակենք մեր հաւաքած թւերը, որ

ժողովել ենք կարելի և հնարաւոր եղածին չափ ստոյգ աղբիւրներին:

Վան նահանգի ազգաբնակութիւններն ու իրանց թիւը 80-ական թւականներին և ներկայումս.

Հայեր —	200,000	մարդ	145,000	մարդ
Ասորիներ —	80,000	»	90,000	»
Քրդեր —	50,000	»	60,000	»
Թիւրքեր —	20,000	»	20,000	»
Հրէաներ —	1,000	»	2,000	»
Եզդիներ —	800	»	2,000	»
Գնչուներ —	600	»	1,000	»
Չէրքէզներ —	300	»	1,000	»
Ընդամենը	352,700	»	321,000	»

Ուրեմն ներկայումս հաւանական հաշուով Վանի ազգաբնակութեան թիւը կարելի է հաշուել 320,000:

Ազգաբնակութեան իւրաքանչիւր ցեղի մասին մեր խօսքը մասնաւորեալ առաջ կարեւոր ենք համարում երկու խօսք ասել ամբողջ բնակչութեան ընդհանուր զբաղումների մասին:

Վանի կուսակալութեան բնակիչների ամենագլխաւոր զբաղմունքներն են՝ երկրագործութիւն և անասնապահութիւն, իսկ երկրորդական և աւելի աննշան պարապմունքներն են՝ այգեգործութիւն, մեղուապահութիւն, անտառահատութիւն, ձկնորսութիւն, որսորդութիւն, զանազան արհեստներ և առևտուր:

Իբրև ամենակարեւոր և ընդհանրացած զբաղում Վանի նահանգում ներկայանում է երկրագործութիւնը, որովհետև հողը, օդը, ջուրը, կլիման իրանց տուած յարմարութիւններով նպաստում են այդ զբաղման, իսկ հացն իբրև անհրաժեշտ սնունդ ստիպում է տեղացիներին պինդ գրկել այդ զբաղումը:

Իր տեղում արդէն ցոյց տուինք, թէ նահանգի որ մասերը աւելի բարեբեր են, որ մասերը յարմար կամ անյարմար են երկրագործութեան, այժմ խօսենք երկրագործութեան վիճակի մասին:

Երկրագործութիւնը Վանի նահանգում դեռևս հին նահապետական վիճակի մէջ է գտնւում: Երկրագործները հերկում են արտերը գութանով կամ արօրով: Հացահատիկները ցանում են գարնանը և աշնանը. առաջին պարագայում ցանքը կոչւում է գարնանացան, իսկ երկրորդ՝ աշնանացան: Գարնանացան ցորենի հացը աւելի ուժեղ է լինում և յարգի: Քիչ արտեր կան, որոնք արօրով են հերկւում. այն արտերը միայն կարելի է արօրով հերկել, որոնց հողը փխրուն և խիստ կակուղ է, իսկ կորդ—չոր արտերը հերկւում են գութանով: Գութանով

հերկելուց յետոյ ցանում են հացահատիկները, տափում են և ջրում: Ակնյայտնի է, որ այս ձևով ցանուած արտերի հացահատիկների մի մեծ մասը ոչնչանում է, որովհետև սերմերի մի մասը ընկնելով կէս կանգունից աւելի խոր ափսոսների մէջ ծածկւում է ահագին ծանրութեամբ կոշտ հողի տակ և չի կարողանում հողից դուրս գալ, մի մասը մնում է հողի երեսը, արևի տակ չորանում է կամ թռչունների կերակուր է դառնում, իսկ մի մասն էլ ջրելու ժամանակ ջրի հոսանքի հետ փոխում է իր տեղը և հաւաքւում է փոս տեղեր, որով արտի մի մասը ծածկւում է խիտ կերպով, իսկ մի մասը մերկ է մնում, որով պարապ տեղերը այնինչ չոր են մնում, իսկ խիտ տեղերի բոյսերը չկարողանալով բաւարար սնունդ գտնել՝ կանոնաւոր կերպով չեն կարող աճել: Հացահատիկների մի մասն էլ ոչնչանում է արտերի ամեն մի ոռոգման ժամանակ, որովհետև ջրի ճանապարհը հարթելու համար բահով թումբեր կանգնեցնելու պէտք է լինում, իսկ այս պարագային դարձեալ բոյսերի մի մասը արմատախիլ լինելով՝ ոչնչանում է: Ահա այս կերպով կարելի է ասել, որ ցանուած սերմի մօտ $\frac{2}{3}$ մասը ոչնչանում է, իսկ անջրդի արտերը բաւական աղատ են մնում այս վտանգից: Հացահատիկների մշակութեան ձևը բաւական տարբեր է Ալջաւաղ և մասամբ Արճէշ գաւառակներում, որոնց արտերն ընդհանրապէս անջրդի լինելով՝ հնարած են վարելու և ցանելու մի ուրիշ եղանակ, որ կոչւում է տեղացիների լեզուով տիր. այստեղ զարնան ժամանակ արտերը գութանով երկու անգամ հերկւում են խաչաձև, յետոյ հողը տափելով հարթում են և թողնում մինչև աշնան սկզբները, հունձքի ժամանակ, շուտ ջրելու են սերմացու հատիկները և նորից սկսում են խոփով հերկել միևնոյն արտը. այս անգամ խոփի վրայ յարմարեցնում են կիսախողովակաձև գործիք, ցորենն այդտեղ են ածում և երբ սկսում են արտն ափսոսել, սերմերը կանոնաւոր կերպով ընկնում են ափսոսների մէջ, միևնոյն ժամանակ ետ քշուած հողերը երկու եզերքների թումբերից գալիս են և հաւասար ու բարակ շերտով ծածկւում են սերմերը. ահա այս կերպով ցանուած արտերի մէջ սերմերի մի հատիկն անգամ չի փչանում ոչ հողի երեսին մնալով և ոչ էլ չափազանց խորը գնալով, մասնաւորապէս ջրելու վտանգ էլ չկայ, միայն մնում է երկնքի հաճութիւնը. եթէ ժամանակին կանոնաւոր անձրևներ են տեղում, այս արտերը մէկին 50—60 մինչև անգամ 100 բերք են տալիս: Արդարև Ալջաւաղը և Արճէշը Վանի նահանգի շտեմարաններն են համարւում:

Այս երկու գաւառակները իրանց հացահատիկներով կարող են կերակրել ամբողջ Վանի նահանգը, միայն թէ մշակելի հողերը

պարապ չմնան, մի երևոյթ, որ վերջին տարիներս բաւական աչքի է ընկնում, որովհետեւ երկրագործ տարրը - հայերն այստեղից գաղթում են, որով և հողը պարապ է մնում:

Նահանգի հարաւային մի փոքր մասում—Գիար կոչուած ասորաբնակ լեռնոտ, քարքարոտ գաւառակում մշակելի հողը շատ քիչ է. եղածն էլ դարերից ի վեր պատրաստուած է արհեստական կերպով: Տեղացիները տաժանակիր աշխատութեամբ լեռների զառիվայրերը քարերով հարթում, ամֆիթատրոնի ձև են տալիս և մակերևոյթի վրայ հող փռելով՝ պատրաստում են փոքրիկ արտեր 3—4 քառակուսի սաժէնաչափ մեծութեամբ, ցանքի ժամանակ հերկում են խոփով կամ փորում են բահով, յետոյ ջրում են և ցանում հացահատիկ—վարսակ (գըլգըլ), ցորեն չեն ցանում, որովհետեւ բերքը քիչ է, իսկ վարսակինն անհամեմատ շատ (1-ին 500—1000 նոյնիսկ). սերմը բուսնելուց յետոյ սկսում են շթիլ անել, այսինքն խիտ տեղերից հանում են բոյսերը և տեղափոխում ցանցառ տեղեր. միևնոյն ժամանակ շարունակ քաղհան են անում, այսինքն աւելորդ խոտերն արմատախիլ են անում, որպէսզի հացահատիկը ազատ աճի և կանոնաւոր սնունդ ունենայ: Ահա հողի սակաւութիւնն այստեղացիներին էլ ստիպել է այս ձևին դիմել:

Այսպէս թէ այնպէս՝ երկրագործութիւնն իր այս վիճակի մէջ Վանի ամենաարդիւնաւոր զբաղումն է, որից յետոյ նոյնքան կարևոր տեղ է բռնում անասնապահութիւնը, որի համար Վանը չի զլանում ամեն տեսակ հեշտութիւններ ներկայացնել: Տեսանք արդէն, որ Վանն ունի իր ամեն մի մասում ընտիր, ճոխ, փարթամ և անսպառելի պարարտ արօտատեղեր, յիշեցինք նոյնպէս, թէ ինչ տեսակ կենդանիներ են պահւում Վանում, որոնց մէջ ամենամեծ տեղը բռնում է ոչխարը: Վանի վիլայէթի սահմաններում սնունդ ոչխարների (այծն էլ միասին) թիւը հասնում է մօտ 300000-ի, որոնց մեծ մասը կերակրւում է հարաւային մասերի—Գաւաշի, Կարճկանի, Շատախի, Նորգուզի, Բէյթ-իւլ-Շիւբաբի, Զուլամերկի արօտներով, աւելի փոքր մասն Աբաղայի դաշտի խոտերով, իսկ նոյնքան էլ հիւսիսում Զիլանայ-Զորի և շրջակայքի մարգագետիններով: Առանց չափազանցութեան կարելի է ասել, թէ յիշեալ տեղերի ամեն մի գիւղում միջին հաշուով կարելի է պահել առնուազն 3000 ոչխար: Մի անգամ Վանի անասնապահութեան և արօտավայրերին լաւ ծանօթ մէկ պարոն, որի հետ այս խնդրի մասին խօսում էի, ամենավստահ շեշտերով պնդեց, թէ ներկայումս որքան անասուն պահւում է Վանի սահմաններում, կարելի է նրա եռապատիկն անգամ պահել առանց դժուարու-

թեան, միայն թէ տեղ-տեղ և երբեմն-երբեմն երկարատև ձմեռը, առատ ձիւնը նեղում է ոչխարներին, արգելելով նրանց դաշտերում արածելը. յետոյ աւելացրեց, թէ մեր արօտավայրերն իրանց առատութեան պատճառով ոչխարին սնունդ տալուց աւելի ուռի կոխան են լինում և ոչնչանում:

Վանի ոչխարներն աչքի են ընկնում իրանց պարարտութեամբ, տուած իւղալի կաթով: Ոչխարի միջին ծանրութիւնն է 2—3 լիտր (1—1 $\frac{1}{2}$ փութ), իսկ ոչխարի դմակի միջին ծանրութիւնը՝ $\frac{1}{2}$ —1 լիտր և աւելի. նահանգի հարաւային կողմերում գտնւում են այնպիսի ոչխարներ, որոնք չկարողանալով իրանց դմակի ծանրութիւնը կրել՝ անիւների օգնութեամբ են առաջ քաշում, այսինքն ոչխարի դմակը կապում են սայլակի առանցքի վրայ, առանցքի անիւնները պտտուելով՝ հեշտացնում են ոչխարի քայլուածքը: Ոչխարներն իրանց պարարտութեան շնորհիւ է, որ յաճախ երկուորեակներ, այսինքն զոյգ-զոյգ կամ նոյնիսկ երեք-երեք են ծնում, մանաւանդ անձրեային և խոտառատ տարիներում 40—60%—ը զոյգ-զոյգ են ծնում: Վանի ոչխարները տեղական, այսինքն ամբողջ նահանգի ժողովրդին միս, իւղ, պանիր, կաթ, մածուն, չորթան, ժափիկ, կաշի, մորթ (չուռ և գափ) տալուց յետոյ արտահանւում են դրսերը—օր.՝ Ուրֆա, Հալէբ, Շամ, Եգիպտոս, Անթաի, Պոլիս, Ռուսաստան ևայլն:

Թէ որքան ոչխար է արտահանւում Վանի սահմաններից և այդ միջոցով որքան փող է մտնում Վանի նահանգը, մենք այդ յետոյ կը տեսնենք. բայց առայժմ այսքանն ասենք, թէ երկրագործութիւնը որքան անհրաժեշտ է տեղացի ժողովրդի ամենակարևոր պէտքը, ամենաանհրաժեշտ սնունդը մատակարարելու համար, նոյնքան անհրաժեշտ է Վանի համար անասնապահութիւնը վանեցիներին՝ երկրորդական, բայց նոյնքան կարևոր պէտքերի մատակարարութեան և մանաւանդ փողի ներածութեան համար:

Ահա Վանի ամենակարևոր և ամենաընդհանրացած զբաղումները սրանք էին, որ յիշեցինք, թէ և կան Վանում նաև ուրիշ պարապմունքներ էլ, սակայն դրանք համեմատաբար շատ աննշան տեղ են բռնում. այնուամենայնիւ երկու խօսք էլ այս զբաղումների մասին:

Նահանգի այն փոքրիկ տարածութիւնները, որոնք արեգդէմ լինելով կամ տաք կլիմա ունենալով՝ շատ թէ քիչ ծառատունկների պտուղներ կարող են հասցնել, հնարաւորութիւն են տալիս տեղացիներին զբաղուել այգեգործութեամբ: Զկայ որեւէ զաւառակ կամ գիւղախումբ Վանում, որի բոլոր գիւղերն

էլ այգեգործութեամբ զբաղուելու բախտն ունենան, այլ իւրաքանչիւր գաւառակի մէջ մէկ կամ մի քանի գիւղերու Սյգիներ կան հարաւային սահմանի վրայ գտնուող գաւառակների և գիւղախմբերի մի քանի գիւղերում, ուր այգեգործները մշակում են ընկոյզ, խաղող, մասամբ նաև նուռ, թուզ: Վան քաղաքն իր արուարձաններով և հարաւից սահմանակից Հայոց-Ձոր կոչուած գիւղախումբն ունին բաւական թուով այգիներ, ուր մշակւում են այն պտուղները, որ յիշել ենք վերը, երբ խօսքը Վանի ծառատունկների մասին էր: Կլիմայի տուած անյարմարութեան պատճառով այգեգործութիւնն էլ ամբողջ նահանգի մէջ ետ է մնացել և խիստ աննշան վիճակի մէջ է. շատ թէ քիչ կարևոր տեղ է բռնում այգեգործութիւնը Վան քաղաքում, որի մասին յետոյ:

Այգեգործութեան հետ յիշենք անտառահատութիւնը: Գուցէ ընթերցողը զարմանայ՝ տեսնելով, որ մինք փոխանակ անտառապահութիւն կամ անտառագործութիւն ասելու՝ անտառահատութիւն ենք ասում: Ահա դրա պատճառը: Վանի նահանգի զանազան մասերում կան բնական անտառներ. ժողովուրդը որևէ կերպով չի աշխատում արհեստական միջոցներով կարելի եղած տեղերում անտառները շատացնել կամ գոնէ եղածներից այն ձևով օգտուել անտառային ծառերից, որ գոնէ անտառները չփչանան. անխընայ կերպով կտրում են ծառերը, ոչնչացնում են անտառները. Կարճկանի անտառներում կան այժմ ընդարձակ տարածութիւններ, որոնք բոլորովին ամայացած են, տեղ-տեղ էլ միայն դարւաւոր բույսերի, կոճղերի արմատների վրայ մացառներն են իրւում. բարեբախտաբար անտառները այնպիսի տեղեր են գտնւում, որ ճանապարհների անկանոնութեան պատճառով փայտերի փոխադրութիւնը դժուարանում է, որով և սպառումը ներկայումս այնքան աչքի չի ընկնում: Անտառահատութեամբ զբաղուողները պարապում են նաև ածխագործութեամբ. անտառների ծառերի ճիւղերը կտրտում են, յատուկ հնոցների մէջ դարձնում ածուխ և փոխադրում զանազան կողմեր: Թէ անտառահատութեամբ և թէ ածխագործութեամբ զբաղւում են այն գիւղացիները, որոնց գիւղերի սահմաններումն են փուղով անտառները (Գաւաշ, Կարճկան կայն):

Հողով զբաղուողների մի փոքր մասն էլ զբաղւում է պարտիզպանութեամբ, բայց աւելի ճիշտ է տաճկական բառով ասել՝ բաղչապանութեամբ, ինչպէս նաև պախէզպանութեամբ. բաղչապանները մշակում են պարտեզներ—բանջարանոցներ, իսկ պախէզպանները մշակում են սեխաստաններ. այս զբաղումներն աւելի ընդհանրացած են Վան քաղաքի, Հայոց-Ձորի, Արճէշի,

Այլապազի, Զուլամերկի կողմերում, թէև ամեն գաւառակի այս ուսոյն անկիւնում կարելի է գտնել թէ բանջարանոց և թէ սեխաստան:

Շատ թէ քիչ աչքի է ընկնում մեղուապահութիւնը, որի գլխաւոր կենտրոններն են՝ Գաւառ, Կարճկան, Մոկա, Զուլամերկ և այլն, թէև Վանի մի անկիւնում—ծաղկազարդ և ջրառատ լեռներում, ձորերում, դաշտավայրերում կարելի է մեղու պահել, սակայն ուր որ առաջուց պահելու սովորութիւն է եղել, այժմ էլ միայն նոյն տեղերում են պահում, կարծես թէ դարերը սրբագործել են այս դրութիւնը, որով ամեն մի տեղ իր զբաղման ճիւղից դուրս ուրիշ որևէ նոր ճիւղ մշակելու հետամուտ չի լինում:

Մեղուապահութեամբ զբաղուողները հետևում են հին, դարաւոր նահապետական եղանակին. ոչինչ նորութիւն մի փնտրելք. փեթակները շինում են մօտ մէկ արշին երկայնութեամբ, զլանաձև կողովից, որ պատրաստում են ճիւղերից, կաւից կամ նոյնիսկ զուտ անասունների կուից: Իւրաքանչիւր փեթակից կարելի է մինչև $\frac{1}{2}$ —1 լետր մեղր ստանալ, և ամեն մի փեթակ էլ տարին 1—2 անգամ էչա-ձագ է տալիս: Մեղուապահութեամբ զբաղուողներ կան, որոնք մինչև 200—300 փեթակ են պահում: Վանի նահանգը մեղուապահութիւնից տարեկան ստանում է մօտ 2500 փութ զուտ մեղր, բացի մեղրամոմից: Մի քանի տեղեր լեռներում և անտառներում կան վայրենացած մեղուներ, որոնք մեծ քանակութեամբ մեղր են արտադրում իրանց բնական փեթակների մէջ, սակայն այնպիսի անմատչելի տեղերում, որ դժուար է մօտենալ մեղր կամ մոմ հաւաքել, այդ պատճառով էլ թէ մեղրը և թէ մոմն արևի տակ և բաց օդի մէջ ոչնչանում են:

Շերամապահութիւնն այնքան աննշան վիճակի մէջ է գտնւում, որ մինչև անգամ չարժէ յիշել: Վան քաղաքի մէջ այս կամ այն տունը, որ ունի թթենու տունկեր, զբաղւում է այդ պարապուկներով. թէև երբեմն-երբեմն փորձեր եղել են թթենիները շատացնելու՝ այդ զբաղումը զարգացնելու նպատակով, սակայն տակաւին նոյն աննշան վիճակի մէջ է մնում Վանի շերամաբուծութիւնը:

Վանի լիճն իր մէջ ունի անհաշիւ քանակութեամբ տառելի ձուկ: Ծաւալայ մէջ 3—6 ամսուայ չափ երբ այս ձկներն սկսում են դէպի գետերն երթալ, գետերի շուրջը գտնուող գիւղացիների մի փոքր մասն սկսում է ձկնորսութեամբ զբաղուել:

Ձկնորսութեան նման մէկ զբաղում էլ որսորդութիւնն է. վերջին տարիների ընթացքում մորթեղէնների (աղուէսի, կուզի,

գայլի և այլ կենդանիների) զնի չափազանց բարձրանալու շնորհիւ բաւական թւով որսորդներ կան այժմ, որոնք ամբողջ ձմեռուայ ընթացքում զբաղւում են կենդանիներ որսալով. մեծ քանակութեամբ որսում են աղուէս: Թէև որսի թռչուններ էլ շատ ունի Վանը, սակայն շահաբեր գործ չլինելու պատճառով անկարևոր է համարւում թռչնորսութիւնը:

Գիւղերում արհեստներ չկան, եղածներն էլ հետաքրքրական են և աչքի են ընկնում իրանց խիստ անդըրհեղեղեան կերպարանքով: Ամեն մարդ գրեթէ իր տան համայնագէտ արհեստաւորն է, տունը շինում է, դռները, կահկարասիները, զանազան գործիքներն ու պարագաներն ինքն է պատրաստում. նըշանաւոր են միայն Շատախի բնակիչները, որոնք զբաղւում են ջուլհակութեամբ և պատրաստում են բրդից ընտիր և համբաւաւոր Շատախի շալը և աբան, որոնք նահանգի սահմաններից դուրս են արտահանւում: Գիւղացի կանանցից ոմանք զբաղւում են ձեռագործներով. պատրաստում են կապերտ, գորգ, գուլպայ, գլխարկ, բայց կոպիտ կերպով: Արհեստաւորների հետ նաև առևտրականները քաղաքի մէջն են գործում. գիւղացի առևտրականներ չկան, եղածներն էլ խիստ սակաւաթիւ են և քաղաքացիների հետ ընկերաբար են գործում: Ուրեմն արհեստների և առևտրի մասին մեր խօսքը նորից յետաձգենք յետագայ էջերում: Այսքանով կը բաւականանանք Վանի գաւառական ժողովրդի զբաղումների մասին: Այժմ երկու խօսք էլ աւենք նահանգի ազգաբնակչութեան իւրաքանչիւր ցեղի մասին առանձին-առանձին: Բայց ինչպէս մինչև այժմ Վան քաղաքի մասին մեր խօսքը յետագային ենք թողել, նոյնպէս պիտի վարուենք և այժմ, երբ խօսքը բնակիչների մասին է. և որովհետև թիւրքերն ընդհանրապէս միայն Վան քաղաքումն են ապրում, իսկ գաւառային անկիւններում գտնուող խիստ սակաւաթիւ թիւրքերը շատ աննշան թիւ են կազմում, մենք նրանց մասին այստեղ ոչ մի խօսք չենք ասիլ:

ԾԵՐՈՒԿ

(Գը շարունակով)